ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ՆԱՄԱԿ ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻՆ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ 250 ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲՐԻԳԱԴԻՐՆԵՐԻՑ

338.14
Հ-28

ԿՈՒՍԱՀՐԱՏ — ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1933

Арм.
2-5611а
338.14
Ն-28

Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք՝

2-5611
07 FEB 2010
904

ՆԱՄԱԿ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ 250 ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲՐԻԳԱԴԻՐՆԵՐԻՑ

Թարգմ. ՇԿԱՐՊ

Г.П.Б. в Лнгр.
Ц. 1934 г.
Акт. № 216
Инв. № 17462

ԿՈՒՄԱԼՐԱՅ ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ
1933

10.07.2013
30.730
2-5011a
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ им. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
(32903-63)
39903-63

Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալին

ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆ

Գրում են ձեզ Հյուսիսային Կովկասի կոլտնտեսային լավագույն բրիգադիրները, վորոնք «250-ի» թվում մրցում էին այս նամակը, ձեզ ուղղած մեր ռապորտը ստորագրելու իրավունքը նվաճելու համար։ Աշնանային աշխատանքների ժամանակ ստորագրելու իրավունքի համար պայքարում էին կոլտնտեսային հազարավոր բրիգադներ։ Այդ իրավունքը նվաճեցինք մենք, ներքևում ստորագրող բրիգադային ղեկավարներս, վոր հաղթեցինք մրցման մեջ։

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԸՆԹԱՆՈՒՄ ՄԵԶԱՆՈՒՄ ՍՈՑՄՐՑՈՒՄԸ

Մենք չենք կարող ձեզ չպատմել մեր մրցման մասին, քանի վոր ամբողջ տարին պայքարում էինք, վորպեսզի ավելի լավ կատարենք ձեր ցուցմունքները հարվածային կոլտնտեսականների համամիութենական համագումարում։ Իսկ ձեր ճառը լսել են մրցակցությանը մասնակցող մեր բրիգադիրներից շատերը, — Դուլբենկոն, Յեգելը, Ոգերովը, Սարաճանովը, Կալինիչենկոն և մյուսները, իսկ ով անձամբ չի լսել ձեր ճառը, շատ անգամ կարդացել է այն և լավ յուրացրել։ Մեր «250» բրիգադները ջոկվեցին յերկրամասում

վորպես առաջատարներ դեռ 1932 թվի սկզբին, մրցտական արտադրական բրիգադների ամրացման մասին յեղած Կենտկոմի վորոշումից քիչ հետ։ Ճիշտ է, շատ բրիգադներ արդեն անցյալ տարի ցույց տվին լավ աշխատանք։ Հարցրեք Միխայիլ Իվանովիչ Կալինինին, նա մեր յերկրամասում եր և ուշադրություն դարձրեց, վոր, որինակ, Սարաֆանովի, Ռիխարդ Ադամի բրիգադներում յուրաքանչյուր հեկտարը տալիս է մինչև 30 ցենտներ (180 փութ) բերք, աշխատանքը լավ է, կարգապահությունն ամուր։ Այդ ժամանակ հայտնեց մեզ Միխայիլ Իվանովիչը նրա համար, վոր Սարաֆանովի փորձը վատ են վերցնում մյուս բրիգադները, իսկ Սարաֆանովի նմանները շատ քիչ եյին։

Նոր ձևով ընթացավ մեր մրցումը, յերբ ջախջախվեց սաբոտաժը, վոր կազմակերպել եյին կուլակության մնացորդները, յերբ դյուղ յեկան քաղբաժինները։ Բեզենչուկի, Վեսելո-Կուտսկի կոլտնտեսականները և ուրիշ շատերը ձեզ գրած իրենց նամակներում արդեն շատ և լավ են ասել քաղբաժինների մասին, մեծապես շնորհակալ են յեղել կուսակցությանն՝ այդ լավագույն բոլշևիկներին ուղարկելու համար։ Այժմ մենք ցանկանում ենք ավելացնել մեր կոլտնտեսային շնորհակալությունը և առանձնապես պատմել, թե ինչ հզոր ուժ դարձավ մրցումը կոլտնտեսություններում, յերբ այդ բանը վերցրին իրենց ձեռքը քաղբաժինները։

Մեր մրցումը հետևյալ ձևով է կազմակերպված. յուրաքանչյուր ՄՏ կայանի ներսում բոլոր բրիգադները պայքարում են առաջատարի պատվավոր տեղի համար։ Մեր բրիգադներից յուրաքանչյուրն իր առաջատար կոչումն ստացել է ՄՏ կայանի ներսում քաղբաժնի կողմից կազմակերպած բոլոր բրիգադների մրցման ընթացքում։ Իսկ առաջատար բրիգադները — ամեն մի ՄՏ կայանից մեկը — մրցում են իրար հետ յերկրային մասշտաբով։ Նրանց աշխատանքն ամեն որ տեսնում է ամբողջ յերկրամասը։ Ցեվ յուրաքանչյուր ամիս հետզհետե ավելի մեծ ուժ է ձեռք բերում մեր որինակը, մեր ազդեցությունը և մենք ինքներս ուրիշ մարդ ենք դառնում։

Յուրաքանչյուր հնգորյակ տեղի յե ունենում պայմանագրերի փոխադարձ ստուգում։ Առաջատար բրիգադների վրանները (таборы) դարձել են մեջբրիգադային արտադրական խորհրդակցությունների շտաբ։ Բրիգադիրներն սկսեցին ցույց տալ իրենց ուժը։ Ցեվ ստացվեց այսպիսի պատկեր։ Դոլբենկոն, որինակ, այնպես եր, ինչպես արևածաղիկը վարսակի համեմատությամբ — Տիխորեցկի ռայոնի բոլոր բրիգադներից յերկու գլուխ բարձր։ Նա պայմանագիր կապեց Տոլստոկորովի բրիգադի հետ դեռ ցանքից առաջ. ինչպես սկսեց Տոլստոկորովը կրնկակոխ անել Դոլբենկոյին։ Տոլստոկորովի պլանն եր ցանել տաս որում։ Նա ցանեց վեց որում, Դոլբենկոյից մի քանի որ առաջ անցավ։ Դոլբենկովցիները հարցնում են նրան.

— Ցույց տուր, թե ինչպես ե քո աշխատանքի վորակը։

Զափեցին ակոսների խորությունը, նայեցին, ինչպես ե պառկած հատիկը.

— Վատ աշխատանք չե։ Բայց Դոլբենկոյինն ավելի լավ ե։

— Իսկ ինչպե՞ս եք տանջել ձիերին՝ մեզ հասնելիս — ասում եյին Տոլստոկորովցիները Դոլբենկոյին։

Սկսեցին համեմատել ձիերը։ Կպչեցին ձիապաններն իրար, վարողներն իրար, խոհարարուհիներն իրար։ Խումբ խումբ և մեկ մեկ։

Իսկ Գրաժդանսկի ՄՏ կայանի քաղաքաժնի պետ ընկ. Շարովը պատմեց բոլոր բրիգադներին, թե ինչպես Տոլստոկորովը հանում է Դոլբենկոյին։ Նայելով այդ ջերմ պայքարին, ընկեր Զերնյավսկու անվան կոլտնտեսության բոլոր 17 բրիգադիրներն սկսեցին պայմանագրերով մրցել ցանքի ժամկետների, վորակի, լծկանի ու մեքենաների պահպանման վերաբերյալ։ Այդտեղ աշխատանքից տաքանում էին և բավականություն ստացվում։

Դոնդուկովսկի ՄՏ կայանում Դոնչենկոյի առաջատար բրիգադի հետ առաջնության համար սկսեցին պայքարել միանգամից 20 բրիգադ։

Կրասնոկինսկի ռայոնում Սարաֆանովի փառքի վրա սկսեցին հարձակվել Կազբանի, Բորիսենկոյի, Կուրբատովի, Յերմիշկինի, Զապլիգինի, Ոնիշկոյի, Կիրիլենկոյի բրիգադները — բոլորը նրան մարտակոչ էին անում։

Քաղհանի ընթացքում իրար հավասար գնում էին Կազբանը և Սարաֆանովը։ Իսկ բերքահավաքին Կազբանն արդեն սկսեց անցնել Սարաֆանովից։ Ընկեր Մորոզովը — Գուլկեվիչի ՄՏ կայանի քաղաքաժնի պետը — յերեկոյան համեմատում է, թե ինչպես անցավ հնձի որը։ Փաստ է, վոր Կազբանն անցնում է Սարաֆանովից։ Այն ժամանակ Սարաֆանովցիներն ասում են.

— Մենք վոչ միայն դաշտում ենք աշխատում, մենք այս տարի այգի յել տնկեցինք։

— Դեհ յեկեք մեզ մոտ, տեսեք, — ասում է Կազբանը, — մինչև դուք այգու մասին աղմկում էիք, մենք ձեզանից ավելի մեծ այգի տնկեցինք։

Ստուգեցին մեկը մյուսի այգիների, բանջարանոցների, շարքահերկ արտերի վորակը։ Թե այստեղ, թե

այնտեղ մաքուր է։ Բայց Կազբանի մոտ համենայն դեպս ավելի լավ է։ Կազբանը սովորեց Սարաֆանովից։ Ինչպես Սարաֆանովն է կազմում ոգակները, այնպես էլ Կազբանն է դարսում կալը, այնպես էլ Կազբանն է անում նրա ձևով։ Սարաֆանովը կալսում է մեկուկես հերթ, Կազբանն էլ մեկուկես։ Դեռ Սարաֆանովից էլ ավելի հացահատիկ է ստանում։

Հնձի ընթացքում Սարաֆանովը համենայն դեպս Կազբանից մի ամբողջ որ առաջ անցավ։ Այն ժամանակ Սարաֆանովը գալիս է Կազբանի մոտ.

— Վերցրու, Կազբան, իմ յերեք հնձիչները, միևնույն է, նրանք կանգնած են։ Դու իսկույն առաջ կընկնես, այդպես էլ կողք կողքի կգնանք յերկու առաջավորներս։

Կազբանը հնձիչները չի վերցնում։ Ասում է.

— Մենք յերկուսս էլ հետ չենք մնացել և մեր միջև բարեկամություն էլ կա։ Յեվ իմ կոլտնտեսականներն ոգնության չեն հանդուրժի։ Դու մեր պատիվը մի շոշափիր։ Մեր ուժերով, բայց կհաղթանակենք։

Լաբինսկի ռայոնի Ռադնիկովսկի ՄՏ կայանի Գորբանեվի առաջատար բրիգադին քաղաքաժնի պետ ընկեր Մենիխը ցույց եր տալիս բոլորին՝ վորպես որինակելի բրիգադ։ Մի անգամ նա Գորբանեվի վրանը բերեց մնացած 40 բրիգադիրներին և սկսեց մանրամասն ծանոթացնել, թե Գորբանեվի աշխատանքի գաղտնիքը ինչումն է, ինչպես է խնամում բույսերը, ինչպես են կազմակերպված խմբերը, ինչպես է բրիգադը պատժում և ուղղում ծույլերին — պատմում է Մենիխը և խայթում մնացած բոլոր բրիգադիրներին։

Չհամբերեց բրիգադիր Բերգերը, ընկեր Ստալին, յերբ ասացին, վոր Գորբանովն իրավունք կստանա ձեղ ռապորտ ստորագրելու, և հայտարարեց.

— Մենք Բուդյոննու մոտ միասին էյինք և իմ գորշ մատյանը (ձին) չէր սայթաքում։ Միասին էլ ստորագրելու յենք ռապորտը։

Պայքարը բորբոքվեց։ Բերգերն ընդհուպ սկսեց հասնել Գորբանևկին — թե նորմաներով, թե վորակով։

Բայց համենայն դեպս պատվով դուրս յեկավ Գորբանևը — ավելի լավ սկսեց աշխատել, պահեց առաջատարի կոչումը և նրա ստորագրությունը կա ձեզ ուղղած այս նամակի տակ։

Նովո-Կորոտնովի ՄՏ կայանում անցյալ տարի կար միայն Կոլոսովի մի առաջատար բրիգադը։ Իսկ այժմ մրցման ընթացքում նրան հասան լավ աշխատանքի տեսակետից Տկաչևի, Պիրոգովի յեվ Նեստերենկոյի բրիգադները։

Բլագոդարնենսկի ռայոնում Մարտինովի բրիգադից սկսեց անցնել Զաբոլի բրիգադը։ Մարտինովը չէր վախենում կորցնելու առաջնությունը — նրա մոտ նորմաները գերակատարվում էյին, Զաբոլի մոտ նույնպես։ Բրիգադներն ընթանում են հավասար։ Միայն թե կոլտնտեսականներն ասում են Մարտինովին.

— Զաբոլան վեց հնձիչներ գործի դրեց։

Մարտինովը ցույց չի տալիս, վոր շփոթվեց։

— Լավ, մենք հինգ հնձիչով էլ նրանից կանցնենք։

Հետո խոստովանեց, թե ինչպես եր իրեն զգում։

— Որ ու գիշեր ինձ հանգիստ չէյին տալիս այդ հնձիչները։ Հիմա քայլում եմ, ուզում եմ չմտածել նրանց մասին, իսկ գլխումս ամբողջովին «վեց հնձիչ, վեց հնձիչ, վեց հնձիչ»։ Ի՞նչ, բանից դուրս է գալիս, վոր Զաբոլան ավելի լավ տնտես է, քան յե՞ս։

Իսկ վեցերորդ հնձիչը վոչ մի կերպ չես կարող ճարել, ամեն ինչ չափված է։ Մի բան է մնացել — ախոյանին խփել արտադրանքով։ Մարտինովն առավոտյան հավաքեց իր հնձվորներին, ձիապաններին, դիզողներին։ — Ահա այսպես ու այնպես, վորոշեցեք, կամ մենք պետք է պարտված լինենք, կամ թե համենայն դեպս ստորագրելու յենք ռապորտ ընկեր Ստալինին և աշխարհի համար էլ ավելի շատ կիլոգրամներ ենք վաստակելու։

Վոտքի կանգնեց ամբողջ բրիգադը — չենք զիջի։ Յեվ այնպես համառ աշխատեցին, վոր նրանցից յուրաքանչյուրն յերբեք չէր աշխատել այդպես իր համար անհատական տնտեսության մեջ։ Մարտինովը նույնպես ստորագրում է ձեզ ուղղած այս նամակը։

Կաբարդինո-Բալկարիայի մարզի Բաքսանսկի ՄՏ կայանի Պսեխուրեյսկի կոլտնտեսության բրիգադիր Մուսա Կարովը, վոր «250» բրիգադից է, քաղհանում տեղի ունեցող խորհրդակցության ժամանակ հայտարարեց, վոր նա հաղթում է իր բոլոր ախոյաններին նրա համար, վոր ամենից շատ է հոգ տանում իր բրիգադի կոլտնտեսականների մասին։ Իսկ մյուս բրիգադիրները, որինակ՝ Խաժմուդար Թյագուրովը, նույնիսկ վրան չեն կառուցել բրիգադներում։ Ծաղրեց Մուսան իր հարևանին։ Խաժմուդարը խոսք վերցրեց և ասաց.

— Իհարկե, յես Մուսայից հետ յեմ։ Բայց վոչինչ անհնարին չկա։ Ինչո՞ւ առաջ չքաշվել։ Մրցման եմ հրավիրում Մուսային։

Այժմ Խաժմուդարի բրիգադում տափաստանում կան տղամարդկանց և կանանց հանրակացարաններ, ճաշարան, խոհանոց, ծածկեր լծկանի համար, լծասարքի համար։ Մանկամսուրների համար գնված է հատուկ տուն։ Իսկ Մուսան ավելի լավ շենքեր բարձրացրեց։ Յեվ այդպես մինչև այսոր նրանք շարունակում են մրցել լավագույն կյանքի համար։

Շատ հետաքրքիր կլիներ ձեզ համար, ընկեր Ստալին, լինեիք մեր հավաքին, տեսնեիք, թե մենք ինչպես աճել ենք մրցման ընթացքում։ Մենք կարող էինք պարծենալ մեր առաջ բրիգադիրուհի Մարիա Իվանովնա Սաֆոնովայով։ Ներկայումս նրա բրիգադն ունի 860 հեկտար ցանք, զանազան բույսեր, դեպի վորոնք տարբեր մոտեցում ունեն նրանք, տարբեր մեքենաներ։ Ահագին տնտեսություն է։ Սաֆոնովան բրիգադն ընդունեց գարնանը։ Բրիգադը ամենահետամնացն եր, ահա Սաֆոնովան այժմ դուրս բերեց նրան առաջավորների շարքը և առաջնություն ստացավ իրենց Տացինսկի ռայոնում։ Վո՞րտեղից է այդպիսի ուժը կնոջը։

Հեղափոխությունից առաջ Սաֆոնովան հողագուրկ եր, տարիներով բատրակություն եր անում մարդկանց մոտ — ամենից շատ Մակեևկի գյուղակում Սվինարև կուլակների մոտ։ Ինչպիսի՞ կյանք կարող է ունենալ բատրակուհին։ Միայն մեծ տներին տանտիրուհին նրան հագնելու տալիս եր պաճկոնակ (կոֆտա), իսկ զատկին — շոր։ Սաֆոնովայի պապին տանջանքով ապանեցին ոգիցերները։ Ցեվ ահա այժմ յերեկվա այդ բատրակուհին մրցման ընթացքում անցավ իրենց ՄՏ կայանի բոլոր բրիգադներից, հաղթեց հին բրիգադիրներին։ Բրիգադիրներից մեկը — Բուդյակը դեռ գարնանից սպառնում եր. «Ցես չեմ լինի, յեթե Սաֆոնիխային չհաղթեմ, մի տես, կնիկարմատին պետ են դարձրել։ Նա վերջին յեղներին կերակրումը կեփի»։

Իսկ ստուգմանը պարզվեց, վոր Սաֆոնովան առաջինը կալսեց ամբողջ ցանածը, հանձնեց, ինչքան պետությանը հասնում եր, առաջինն ավարտեց աշնանավարը։ Իր հաղթանակի գաղտնիքը Սաֆոնովան բացատրում է հասարակ ձևով. «Իմ մրցումը ղեկավարում եր ընկեր Պունդիկը, քաղբաժնի պետի տեղակալը։ Բոլոր պատասխանատու դիրքերը յես իմ բրիգադում տվի հարվածայիններին, իսկ նրանք այնպիսի մրցում սկսեցին, վոր ծույլերը չեյին կարող շունչ քաշել»։ Մենք նկատի առանք Սաֆոնովայի այդ ծառայությունները և մեր հավաքում վորոշեցինք սրտանց պարգևատրել նրան լավ հայելապատ պահարանով։ Ցեվ մենք ասացինք նրան հավաքում. «Նայիր, Սաֆոնովա, այդ հայելու մեջ, բայց մի զոռոզանա»։

Մենք պարգևատրեցինք նաև Անդրեյ Խարիտոնովիչ Ոկոլելովին։ Նա մեզանից տարիքով ամենածեր բրիգադիրն է, իսկ աշխատանքով ամենից յերիտասարդը։ Մենք վորոշեցինք գնել նրա համար լավ տուն, վորովհետև նա իր ամբողջ կյանքում չքավոր է յեղել և մանելով կոլտնտեսություն, շարունակում եր ապրել խրճիթում։ Ի՞նչ բանի համար մենք նրան պարգևատրեցինք։ Դա հայտնի կլինի հետագայում մեր նամակից։ Ոկոլելովը հենց համագումարին մեզ բոլորիս հրավիրեց շնորհավորելու նոր տունը։

Մեր մրցման ընթացքում մենք այսպիսի կարգ ենք սահմանել. քանի վոր բրիգադն առաջատար է, բոլոր միացածները պետք է ստուգեն նրան յուռանդով. ինչ ոգտակար է, փոխ առնեն, անպետքը — խիստ քննադատեն։ Տկաչև, Ֆիշեր, Մարտինով, Ոկոլելով բրիգադիրները «Մոլոտ» թերթի միջոցով առաջարկեցին յերկրհողվարչության քաղսեկտորին, բերքահավաքի աշխատանքների հասարակական ընդունելություն անցկացնելու բոլոր առաջատար բրիգադներում։ Քաղբաժիններն անցան այդ գործին։ Ցեվ ահա, պատկերացրեք, ընկ. Ստալին, ինչպես աղմուկ եր լինում այդ վրաններում, յերբ ամբողջ ՄՏ կայանից

գալիս էին բրիգադիրները, քաղաքաժնի աշխատակիցների հետ միասին, բծախնդիր կերպով ստուգում էին բրիգադի ամենաչնչին գործն անգամ. արդյոք հարթածայինն էլ ծույլի հետ վատություն չի անում, արդյոք կորուստ չկա՞, չվարած տեղեր չկա՞ն, բոլոր ժամկետներն արդյոք պահպանված են, չե՞ն ատկացրել արդյոք ձիերը, յեղները, արդյոք համերաշխ և դնում նրանց աշխատանքը տրակտորիստների հետ։ Պետք է խոստովանել, որ բրիգադիր Յանսիցկին Մայկոպի ռայոնից, Դուաչինը Վորոնցովո-Ալեքսանդրովսկից և մի շարք ուրիշները չդիմացան այդ ստուգմանը։ Քաղաքաժինները նրանցից վերցրին առաջատարների կոչումը։ Բայց դրա փոխարեն ինչպես ջերմորեն բարբոքվում էր բրիգադների մրցումը յուրաքանչյուր ՄՏ կայանում հասարակական այդպիսի ընդունելությունից հետո։

ՄԵՐ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԵՐ ԱՇԽՈՐԻ ՅԵԿԱՄՏԻ ՄԱՍԻՆ

Բոլոր մենք, ներքևում ստորագրողներս, անցել ենք հասարակական այդպիսի ընդունելություն։ Ի՞նչպիսի ցուցանիշներ ունենք մենք։ Մեր բրիգադները յերկրամասում առաջինն ավարտեցին քաղհանի կամպանիան, բոլորից առաջ հնձեցին և կալսեցին հացն ամենաքիչ կորուստներով, յուրաքանչյուրն իր ՄՏ կայանում, իր ռայոնում առաջինն ավարտեց հացը հանձնելու առաջադրությունը ժամկետից առաջ, առաջինն ավարտեց աշնանացանը։ Յեվ դա բարձր վորակի ցանքս է, մենք ստացանք հրաշալի ծիլեր և ամենքից շուտ աշնանավար կատարեցինք։

Ահա Ոզերովի բրիգադը բերքահավաքի ընթացքում։ Մայկոպի ռայոնը մինչև հուլիսի 22 հնձել էր հասկայինների պլանի միայն 21 տոկոսը, իսկ Ոզերովի բրիգադը 100 տոկոսը։ Մինչև ոգոստոսի 21 ռայոնը կալսել էր 43 տոկոս, Ոզերովի բրիգադը — 100 տոկոս։ Մինչև հոկտեմբերի 20 ռայոնը կատարել էր աշնանացանի 47 տոկոսը, իսկ Ոզերովի բրիգադը ցանքը վերջացրել էր։ Կամ թե վերցնենք, որինակ՝ Մարիա Սաֆոնովայի բրիգադը. նա հասկայինները հավաքում է ոգոստոսի 10-ին, այն դեպքում, երբ Տացինսկի ռայոնը ամբողջովին հավաքում է միայն 70%-ը։ Աշնանացանը Սաֆոնովան վերջացնում է հոկտեմբերի 22-ին, երբ ռայոնում պլանը ավարտվում է միայն 24%-ով, իսկ Տացինսկի ՄՏկայանում 27%։ Այդպիսի տեմպեր ունենք մրցման բոլոր մասնակիցներս։ Բայց մեր ամբողջ մրցմանը գնահատական տալիս է բերքը։ Առանց պարծենալու ասենք, որ մեր բոլոր առաջատար բրիգադներում բերքն ավելի բարձր է, քան հարևանների մոտ։ Ահա, որինակի համար, Բելոռեչենսկի ռայոնում վերջին չորս տարում միջին բերքը 10 ցենտներ է, իսկ Ոկոլելովի բրիգադն իր հոդամասում հավաքեց 20—25 ցենտներ հեկտարից։ Թե բրիգադիր Զերլերը Տեմրուկի ՄՏկայանում, թե բրիգադիր Կուրգասը Կրիմսկի ՄՏկայանում Ոկոլելովից հետ չեյին մնում։ Նրանք նույնպես 20 ցենտներ աշնանացան ցորեն ստացան։

Նշենք նաև Բիչկովի բրիգադը (Կրասնոդարի ռայոնի Վասյուրինսկի ՄՏկայանում) — 18 ցենտներ, Բեգենկոյինը (Մայկոպի ՄՏկայանում) — 15 ցենտներ, Մարինչենկոյինը (Դուաչինսկի ՄՏկայանում Տարասովսկի ռայոնում) — 14 ցենտներ, Կարնաչինը (Վորոնցովո - Ալեքսանդրովսկի ռայոնի Սորոմենսկի

ՄՏկայանում) — 14 ցենտներ, Կուլիկովինը (Նեվինոմիսսկի ՄՏկայանում) — 12 ցենտներ, Դոնչենկոյինը (Դոնգուզովսկի ՄՏկայանում) — 14,5 ցենտներ։

Գարու վերաբերյալ լավ ցուցանիշներ ունի Պլուժնիկովի բրիգադը (Տիմաշևսկի ՄՏԿ), վորը հավաքել է մինչև 20 ցենտներ, Բրատուսի բրիգադը (Կալիցկի ՄՏԿ) 20 ցենտներ, Կուլիկովի բրիգադը (Նեվինոմիսսկի ՄՏԿ) — 24 ցենտներ, Վորոնի բրիգադը (Ձելբասկի ՄՏԿ, Կանևսկի ռայոնում) — 20 ցենտներ, Բոգիկալովի բրիգադը (Պավլովսկի ռայոնի Կուրչանսկի ՄՏԿ) — 20 ցենտներ։

Ցեգիպտացորենի վերաբերյալ 30-ից ավել, իսկ վոմանք 40 ցենտներ բերք են ստանում՝ Լեբեդա (Տացինսկի ռայոնի Սկոսիրի ՄՏԿ) Կարով Մուսա (Բախանսկ ՄՏԿ-Կաբ-Բալկարսկի մարզ), Վիբորնիյ (Վաննովսկի ՄՏԿ), Տկաչով (Բրյուխովեցկի ռայոն Նովոկուբանսկի ՄՏԿ), Մակեև (Կրապոտկինսկի ռայոն Գուլկևիչի ՄՏԿայան), Պլուժնիկով (Տիմաշևսկի ՄՏկայան), Լեուս (Միչուրինսկի ՄՏԿայան) և շատ ուրիշները։

Մենք այդ ասում ենք, ընկեր Ստալին, այն բերքի մասին, վորը փաստորեն հավաքվել է և ստացվել է կալսից հետո։ Այն ինչ շատ բրիգադներ, բերքը չըհնձած հաշվելով լավ, թողին, վոր հետո թափվի և ունեցան մեծ կորուստներ, իջեցրին աշխորի յեկամուտը։

Ինչպես ենք մենք հասկանում մեր բերքատվության թիվը։ Նրանք մեզ ասում են, վոր կոլտնտեսային բարեխիղճ աշխատանքով, ագրոնոմիկական բոլոր միջոցառումները կատարելով մեր հողերը մշակելու համար, մեր հողերը կտան կրկնակի բերք, քան թե այժմ ստանում են մեր շատ կոլտնտեսություն-

ները, քան թե ստանում էյին շատ անհատական տնտեսություններ։

Մենք լավ կատարեցինք թե բերքահավաքը և թե աշնանային աշխատանքները, վորովհետև խորապես հասկացանք կուսակցության կողմից մեզ տված պատգամը։ Հացահանձնումներն արագացրին բոլոր մեր աշնանային աշխատանքները։ Մենք յերկրամասում առաջինը հանձնեցինք հացը պետությանը, առաջինն ամբարեցինք սերմացուն և առաջինը բաժանում ենք յեկամուտը։

Հավաքում մենք մտքերի փոխանակություն ունեցանք, թե ով ինչքան յեկամուտ է ստանում։ Բրիգադների մեծամասնությունն ստանում է աշխորին 6 կիլոգրամ։ Աշխորին 10 կիլոգրամից ավել ստանում են հետևյալ բրիգադները — Կարովի բրիգադը (Բաքսանսկի ՄՏԿ), Բրատունինը (Կալմիցկի (ՄՏԿ), Մարինչենկոյինը (Դյաչինսկի ՄՏԿ), Ստուպարի բրիգադը (Կանևսկի ՄՏԿ), Սեմյոնովինը (Կուբերլյեևսկի ՄՏԿ), Ռոլինի բրիգադը (Սլիցևսկի ՄՏԿ), Մարտինովինը (Բալլացկայա ՄՏԿ), Ոկոլելովինը (Վեիլչկովսկի ՄՏԿ) և մեր ուրիշ շատ բրիգադիրները։ Իսկ կան բրիգադներ, վորտեղ ստանում են 20-ական կիլոգրամ և ավելի։

Բայց բոլոր կոլտնտեսություններն այդպես չէյին աշխատում։ Մենք կոլտնտեսություններ ունենք, վորտեղ հացը հազիվ է բավականացնում։ Բայց նրանք իրենք են մեղավոր այդ բանում։ Մրցման ընթացքում նրանք հետ մնացին, հետո բոլորովին ձեռք քաշեցին մրցումից.— այնպես էլ յոլա կգնանք, ասում էյին։ Աշխատում էյին իրենց համար, ինչպես վոր լիներ, ծույլերին յերես էյինք տալիս, չէյին ջախջախում կուլակային մնացորդներին։ Դրա համար էլ այժմ ասում են — այս

Гос Библиотека ՀՍՍՌ им. А. М

տարին անբերրի չէ, այնքան էլ լավ չէ։ Նրանց համար յեթե պատրաստի ցորենն յերկնքից թափվեր, այն ժամանակ լավ կլիներ։

Այստեղ, իհարկե, մենք էլ մեծ մեղք ունենք։ Շատերին մենք ներգրավեցինք մրցման մեջ, բայց վոչ բոլորին և հասարակական հսկողության ձևով բոլորն ոգնություն չեյին ստանում։ Մի քանիսին, վորոնք ակնհայտնիորեն հետ եյին ընկել, միայն հայհոյում եյին հետևից, ուրիշ վոչինչ։ Մենք պայքարում եյինք նրա համար, վոր Հյուսիսային Կովկասը գրավի առաջին տեղը կարմիր տախտակի վրա, բայց այդ արշավանքի մեջ մենք չներգրավեցինք բոլոր կոլտնտեսություններին, բոլոր բրիգադներին, ինչպես հարկն է։

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ ՆՎԱՃԵՆՔ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՄԵԾ ՓԱՌՔ

Չենք թագցնում, ընկեր Ստալին, մեզ շատ դուր յեկավ այն հարգանքը, վոր մեզ ցույց տվին Հոկտեմբերյան որերին յերկրային կենտրոնում՝ Ռոստովում։ Մենք ցույցի յեկանք Սելմաշի լավագույն հարվածայինների հետ։ Իսկ հրապարակում, վորտեղ Լենինի արձանն է, մեզ համար հատուկ ամբիոն կառուցեցին, և յերկար նայում եյինք բանվորների ամբողջ հզորությանը և Կարմիր բանակին — ինչպիսի մեծ ուժ։ Իսկ ընկեր բրիգադիրներ Դոլբենկոն, Սաֆոնովան և Կարով Մուսան կանգնել եյին կենտրոնական ամբիոնի վրա, կուսակցության Յերկրկոմի քարտուղար ընկեր Շեբոլդայեվի կողքին։

Հասկացանք մենք ձեր խոսքերը, ընկեր Ստալին, վորոնք գրված են սոցիալիստական մրցման մասին

մեր տոմսերում. «մի քանիսը վատ են աշխատում, մյուսները լավ, յերրորդներն ավելի լավ — պետք է հասնել ընդհանուր բարձրացման»։

Հատկապես մեզանում, Հյուսիսային Կովկասում։ Մեր հարևան շատ կոլտնտեսություններ ու բրիգադներ դեռ հետ են մնում, դեռ հավաքում են ցածր բերք, դեռ չեն վոչնչացրել կուլակային ազդեցությունները։ Յեվ մենք, առաջատար բրիգադներս, այսպես ենք հասկանում մեր դերը. Մեր ՄՏկայաններում լինել քաղբաժինների լավագույն ոգնականները բոլոր աշխատանքներում, բոլոր նոր խնդիրներում — անել հարվածային նախաձեռնություն, ցույց տալ մրցման կենդանի որինակ, տանել իր հետևից հետամնաց բրիգադները, ոգնել նրանց գլուխ հանելու կուլակային ոգնականների, ծույլերի հետ:

Ընկեր Դոլբենկոն, ստանալով մրցման մասնակցի տոմսը, խոստացավ ապագա հավաքին առաջավորների շարքը հանել նաև 4 բրիգադիրների։

Ընկ. Ոկոլելովը խոստացավ մինչև մահ լինել առաջավոր, նույնպես 4-ի համար յերաշխավոր յեղավ։ Ընկեր Սաֆոնովան յերդվեց պայքար տանել, վորպեսզի հետևյալ հավաքին լինեն վոչ պակաս, քան 50 կին բրիգադիրներ։

Իսկ յերիտասարդ բրիգադիր ընկեր Գրիցունը շատ լուրջ հայտարարություն արեց. «Ինքներդ գիտեք, — ասաց նա, — թե ինչ բան կախում ունի կոլտնտեսային բրիգադի ամրությունից։ Մեզանում Նովոտիտարովսկի ՄՏկայանում վատ են ամրացնում բրիգադները, թույլ են տալիս յենթակուլակներին խախտելու նրանց, իսկ վորոշ տեղերում բոլորովին վոչնչացրին նաև մշտական բրիգադները։ Այդ բանի համար ինձ գանգատվեց, որինակ, բրիգադիր Գավրիլենկոն, վորը

վաստորեն բրիգադ չունի, վարչությունն այդ բրիգադը մաս-մաս ծախծխեց պատահական աշխատանքների վրա։ Ձեզ խոստանում եմ օգնել կուսակցությանը և քաղբաժնին, ինչքան կարելի յե շուտ վերականգնել և ամրացնել կոլտնտեսային բրիգադներն ամբողջ ՄՏկայանում, վորովհետև յես այժմ առաջատար բրիգադիր եմ»։

Մրցման մեջ մենք գրավեցինք առաջավորների տեղը, խիստ պայքարելով կուլակային մնացորդների դեմ, կուլակային ազդեցությունների դեմ։ Մրցման մեջ մենք, բրիգադիրներս, մեզ զգացինք կոլտնտեսային գործի իսկական տերեր, յեվ չկա այնպիսի ուժ, վորը մեզ արգելի այժմ առաջ քաշելու Հյուսիսային Կովկասի հետ մնացած կոլտնտեսությունները, յերբ ունենք քաղբաժինների ղեկավարությունը յեվ լենինյան ձևով կազմակերպել ենք մրցումը։

Չե՞ վոր յուրաքանչյուր ռայոնում, ՄՏկայանում կան մեր մրցման մասնակիցները։ Միևնույն հողում բոլոր կոլտնտեսությունների և բրիգադների հետ միասին մենք վարում ենք, ցանում, հնձում։ Ձիեր ու մեքենաներ մենք ավելի չունենք, քան մեր հարևանները։ Յեվ յեթե Կուրգասը—Կրիմսկի ռայոնում, Ոկոլելովը—Բելորեչենսկում, Բիչկովը-Կրասնոդարում, Մարտինովը—Բլագոդարնենսկում, Մարինչենկոն—Տարասովկում. Դոնում, Կուբանում, Թերեքում, Ստավրոպոլում՝ աշնանացան ցորենից բերք հավաքեցին 18—20—25-ական ցենտներ, նշանակում է, այդպիսի բերք կարող է և պետք է հավաքի ամբողջ յերկրամասը, մեր բոլոր կոլտնտեսությունները։

Մեր բերքը փորձնական կայաններում չե ստացված և մենք վոչ մի համալսարաններում դեռ չենք սովորել, չնայած մեզնից շատերը սովորում են և հույսով են լինել ագրոնոմներ, ինժեներներ։ Պարզապես մենք ուրիշներից լավ ենք կատարել կուսակցության պատգամը, ուրիշներից ավելի շատ աշխատանք ենք թափել հողը մշակելու, ծույլի և յենթակուլակի վերաբերյալ յեղել ենք անողորմ և ամեն մի կոլտնտեսականի քաշել ենք սոցմրցակցության մեջ։ Դուք ասել եք, ընկեր Ստալին՝

«Ասում են, վոր կոլտնտեսությունների ուղին ճիշտ ուղի յե, բայց նա դժվար է։ Դա մասամբ միայն ճիշտ է։ Իհարկե, այդ ուղու վրա դժվարություններ կան։ Լավ կյանքը ձրի չի տրվում։ Բայց բանն այն է, վոր գլխավոր դժվարություններն արդեն անցել են, իսկ այն դժվարությունները, վորոնք կանգնած եր մեր առաջ, չարժե մինչև անգամ լուրջ խոսել նրանց մասին»։

Թող այժմ նախանձեն հարևանները ազնվորեն վաստակած մեր ծանրակշիռ աշխորին։ Իրենք ել կուզենան իրենց մոտ այդպիսի կարգեր ստեղծել։ Մենք այդ բանում կօգնենք նրանց, իսկ ինքներս ավելի առաջ կգնանք—դարձնելու մեր կյանքը կուլտուրական, ունևոր։ Ճիշտ ասաց մեր հավաքում Կաբարդինո-Բալկարացի բրիգադիր Մուսա Կարովը. «Այժմ կոլտնտեսականների հետ կարելի յե լեռները շրջել»։

Մեզ այժմ զբաղեցնում են շատ նոր խնդիրներ, վոր իրենց ամբողջ հասակով ծառացել են բրիգադների առաջ։

Կուսկազմակերպիչների—*այդ ամուր բոլշևիկների, բրիգադների քաղաքական ղեկավարների մասին։ Առանց նրանց բրիգադները չեն ստանա քաղաքական ամուր կոփվածություն, չեն կարող յուրաքանչյուր կոլտնտեսականից դաստիարակել բոլշևիկյան կոլտնտեսության գիտակից, կուլտուրական անդամ։*

Մեքենաների մասին, կոլտնտեսային լծկանի լավ տրակտորների միասին աշխատելու մասին: Մեքենան այժմ մեծ ուժ է գյուղերում: ՄՏկայանները նրան խորը կերպով հաստատեցին մեր տնտեսություններում: Մեքենան պահանջում է մեզնից նոր ձևով աշխատել, պահանջում է ավելի շատ վորոշակիություն, ավելի շատ պլանայնություն, լարվածություն և շատ նոր գիտելիքներ:

Իզուր չէ, վոր հրավիրեցինք մեր հավաքին ներկա լինել տրակտորի լավագույն բրիգադավարներին, բոլոր հարցերը քննարկեցինք նրանց հետ միասին և վորոշեցինք անմիջապես սկսել յերկրամասում ըստ մեր օրինակի 300 ղեկավար տրակտորային բրիգադների սոցմրցակցություն:

Տրակտորային բրիգադներ — Լիխ, Տեվչենկո, Դուլայեվ և ուրիշներ — առաջինը հայտարարեցին իրենց այդ սոցմրցակցության հարվածայիններ:

Կուլտուրայի մասին, մեր գրագիտության, ագրոտեխնիկական գիտելիքների մասին: Գյուղում — գրքի, կինոյի, ռադիոյի սով է, լարվածություն ամբողջ տարին լավ սովորելու համար ագրոտեխնիկական լավ, հաստ դասագրքի սով է, բաղնիքի սով է: Յեվ դուք լավ գիտեք ընկեր Ստալին, ինչպիսի:

Ձմեռվա մասին, այն մասին, վոր — մենք կոլտնտեսություններում պետք է նոր ձևով դիմավորենք ձմեռը: Պետք է դիմավորել ձմեռն անպայման վերակառուցելով աշնանավարի պլանը, լրիվ նախապատրաստելով սերմացուն: Ձմռան ամիսներին մենք լարված սովորելու յենք, կապելով ագրոտեխնիկայի տիրապետման ամբողջ ուսուցումը յեկող տարվա արտադրական պլանի նախապատրաստության հետ:

Հարկավոր է, վորպեսզի արդեն ձմռանը պլանը մոտ և հասկանալի լինի ամեն մի կոլտնտեսականի, վորպեսզի ձմռանը պատրաստ լինեն գարնան համար մարդիկ, մեքենաներ, ձիերը, հողը: Դա շատ մեծ խնդիր է մեր կոլտնտեսությունների համար: Կլուծենք այդ խնդիրը — կսովորենք կոլտնտեսություններում ավելի արագ անել ամեն ինչ իր ժամանակին: Իսկ դա գլխավորն է, վորպեսզի յեկող տարի ավելի մեծ բերք ստանանք, վերջնականապես ազատվենք մոլախոտերից, դաշտերին կուլտուրական տեսք տանք:

Ձիու մասին: Շատ մեծ տագնապի մեջ ենք մենք նրա մասին: Մինչև անգամ մեր բրիգադներում ձիերի կոտորվելու դեպքեր են յեղել: Մենք վորոշեցինք խիստ կերպով անցնել այդ գործին: Իրար խստորեն ստուգում ենք — արդյոք տաքացված են գոմերը, ինչպիսի կեր և ինչպես է նախապատրաստված, ով է նշանակված ձիերի վրա, ինչպիսի լծասարք է, ինչպես են խնամում սմբակները և այլն: Բայց դա քիչ է. պետք է մրցենք մատաղ սերունդը — քուռակները և արջառները լավագույն կերպով աճեցնելու համար:

Խոսք ենք տալիս, վոր մեր կոլտնտեսություններում լինեն ամենալավ մայրաքները, վոր գարնանը մատակները կզուգավորեն և կտան առողջ և լավ աճեցում:

Այդ բոլոր այրող հարցերի մասին մենք մանրամասն խոսեցինք հավաքում, հատուկ սեկցիաներում քննարկեցինք, հետաքրքրվեցեք — կարող ենք ուղարկել արձանագրությունը:

Բացի այդ, մենք վորոշեցինք կազմել կոլեկտիվ գիրք մեր մրցման մասին, վորպեսզի ամբողջ տարվա փորձն այնտեղ հավաքենք:

Գիրքը վոր լույս տեսնի, ձեզ կուղարկենք:

Մեր նամակն յերկարեց, պետք է վերջացնել։ Մեր յերկրամասի հարստությունների մասին կարիք չի լինի ավելորդ անգամ խոսել։ Նրանք ձեզ հայտնի յեն։ Հողը ամենապտղաբերն է. տալիս է միլիոնավոր փութ ցորեն, բամբակ, արևածաղիկ, ճակնդեղ, գենագերչակ, ծխախոտ, միլիոնավոր գլուխ անասուններ է աճեցնում յերկրամասը։ Չկան այնպիսի գյուղատնտեսական մթերքները, որոնք չարտադրվեն մեր Հյուսիսային Կովկասում։ Մենք այժմ մշակում ենք ամենաթանկարժեք յեթերաբեր բույսեր, որոնք մեզ մոտ են բերված հեռավոր Ճապոնիայից և Իտալիայից։ Յեվ այդ բոլորը—կոլեկտիվ աշխատանքով։ Յեվ ահա մեր յերդումը, ընկեր Ստալին. մենք կտանք մեր բոլոր ուժերը, կխորտակենք բոլոր դժվարությունները, բայց կուսակցության ղեկավարությամբ, ձեր ղեկավարությամբ, ընկեր Ստալին, կհասնենք այն դրության, որ մեր յերկրամասում չլինեն վաս կոյտնտեսություններ։

Մի ժամանակ Հյուսիսային Կովկասը հանդիսանում եր կալվածատիրական-գեներալական սրիկաների հենակետ, սպիտակ գվարդիականների պատվար։ Մեր բրիգադիրներից շատերը պարտիզան են յեղել, պակաս սպիներ չունեն այդ կռիվներից։

Յեվ այնպես, ինչպես ձեր ղեկավարությամբ և Կլիմ Վորոշիլովի ու Սեմյոն Բուդյոննու հրամանատարությամբ մեր բրիգադները—ընկեր Ժերեբյատեվը, Գորբունովը, Բեդենկոն, Սիմոնիկովը, Կալինիչենկոն, Անտիպովը, Լաժկոն, Յելիգարովը, Ռոլինը և ուրիշ շատերը—նվաճեցին խորհրդային իշխանությունը Հյուսիսային Կովկասում և փառքով պատեցին իրենց, այնպես էլ այժմ, կուսակցության ղեկավարությամբ, ձեր ղեկավարությամբ մենք Հյուսիսային Կովկասի համար կնվաճենք կոլտնտեսային մեծ փառք։

Յանկանում ենք ձեզ բարի առողջություն, ընկեր Ստալին։

Հյուսիսային Կովկասի կոյտնտեսային առաջատար բրիգադների բրիգադավարներ, վորոնք իրավունք են նվաճել ստորագրելու հոկտեմբերյան ռապորտ ընկեր Ստալինին (հետևում են 250 ստորագրություններ)։



Նոյեմբեր, 1933 թիվ։

«250» ԲՐԻԳԱԴԻՐՆԵՐԻ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԻ ՄԱՍԻՆ

ՀԿ(բ)Կ Հյուսիսային Կովկասի Ցերկրկոմի 1933 թվի նոյեմբերի 29-ի վորոշումը

Հավանություն տալով «Պրավդայում» և «Մոլոտում» հրապարակված «250» կոլտնտեսային լավագույն բրիգադների ընկեր Ստալինին գրած նամակին, ՀԿ(բ)Կ Յերկրկոմը պարտավորեցնում է յերկրամասի բոլոր կուսկազմակերպություններին.

1. Մշակել նամակը յերկրամասի բոլոր կոլտնտեսային ու տրակտորային բրիգադներում, մոբիլիզացիայի յենթարկելով կոլտնտեսային մասսաներին ավելի շուտ ավարտելու հացահանձնումը և ամբողջ յերկրամասի համար մոտ որերս ընկեր Ստալինին ռապորտ տալու բավունք նվաճելու։

2. Լայնորեն ոգտագործել կոլտնտեսային «250» առաջատար բրիգադների փորձը, աշնանավարի ընթացքում մասսայական մրցում ծավալելու, ավարտելու յեզիպտացորենի ու արևածաղկի բերքահավաքն ու կալսումը, անցկացնելու ձմեռային պարապմունքներ և նախապատրաստում 1934 թվի գարնանացանի համար, վորպեսզի յուրաքանչյուր կոլտնտեսություն, բրիգադ և առանձին կոլտնտեսականներ արժանավոր կերպով դիմավորեն կուսակցության համամիութենական 17-րդ համագումարը։

Մինչև կուսակցության յերկրային կոնֆերանսը լույս ընծայել մի ժողովածու, վորն ընդհանրացնում է «250» կոլտնտեսային առաջատար բրիգադների մրցման փորձը։ Հաստատել ժողովածուի խմբկոլեգիան հետևյալ կազմով — ընկեր Շահումյան, Ցիլով, Կանտոր և Միխալևիչ։

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՄՏ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՊԵՏԵՐԻՆ

«Պրավդան» նոյեմբերի 29-ին և «Մոլոտը» նոյեմբերի 30-ին հրապարակել են Հյուսիսային Կովկասի «250» կոլտնտեսային լավագույն բրիգադների ընկեր Ստալինին գրած նամակը։

«250-ի» մրցումը - քաղբաժինների ղեկավարությամբ հանդիսանում է կոլտնտեսությունների տնտեսական ու կազմակերպչական ամրացման և կոլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակության կարևորագույն մեթոդներից մեկը։

Կոլտնտեսային կարգը անսահման հնարավորություն է տալիս բանվորների և գյուղացիների միջից առաջ քաշել սոցիալիստական գյուղատնտեսության կազմակերպիչներ, արհեստագետներ։

Այդ հաստատում են «250» առաջատար բրիգադները, վորոնք իրենց միջից ջոկել են կազմակերպիչներ — լավագույն բրիգադիրներին։

Այս շարժումը ցույց է տալիս, թե ինչպես քաղբաժինների անմիջական ղեկավարությամբ աճում են բրիգադների իսկական ղեկավարները, թե ինչպես սոցիալիստորեն դաստիարակվում են կոլտնտեսականները։

Անհրաժեշտ է հետագայում ավելի մեծ թափ տալ ու ծավալել այդ շարժումը, վորպեսզի ամրանա «250-ի» մրցումը և առաջ քաշվեն բոլոր հետամնացած բրիգադները, հասցնելով իրենց աշխատանքը «250-ի» որինակելի բրիգադների մակարդակին։

Յերկրամասի «250» առաջատար բրիգադների ամրացման և սոցմրցման հետագա հաջող ընթացքի համար առաջարկում եմ քաղբաժինների բոլոր պետերին.

1. Անմիջապես քննարկել «250» առաջատար բրիգադիրների ընկեր Ստալինին գրած նամակը կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների լայն ժողովներում, ավելացնելով մրցողների շարքերը, ամրացնելով աշխատանքային կարգապահությունը, կատարելով նորմաները և ձեռք բերելով մրցող բրիգադների աշխատանքի բարձր վորակը։

2. Կազմակերպել այդ բրիգադների փորձի ու ռացիոնալական առաջարկությունների փոխադրումը և դրանով «250»-ի աշխատանքի լավագույն որինակները տարածել բոլոր բրիգադներում։

3. «250-ի» յուրաքանչյուր բրիգադում ջոկել կուսկազմակերպիչ։

4. Ծավալել աշխատանքը՝ բրիգադներին գարնան համար նախապատրաստելու, լծկանին լավ խնամք ապահովելու, կերը մթերելու, գյուղատնտեսական գործիքները վերանորոգելու, բրիգադի կուլտուրական սպասարկումը կարգավորելու համար, հայտարարելով սոցմրցում կուլտուրական կայանների շուտափույթ և լավ կառուցման համար։

5. Կուսկազմակերպիչը և բրիգադիրը ձմեռվա ուսուցման ընթացքում պետք է ձեռք բերեն տրակտորային գործի տեխնիկայի տիրապետումը։

6. Ստեղծել բրիգադում ակտիվ և կոմյերիտականներից, կոլտնտեսուհիներից և լավագույն կոլտնտեսականներից նախապատրաստել բրիգադիրի ոգնական։

7. Կազմակերպել լավագույն բրիգադիրների և կոլտնտեսականների սիստեմատիկ առաջքաշումը կոլտնտեսային ղեկավար աշխատանքի համար (կոլտնտեսությունների նախագահներ, վարչության անդամներ և այլն)։

8. Քաղբաժինների թերթերի խմբագիրները պետք է այնպես անեն, որ «250» առաջատար բրիգադների թվում մրցող յուրաքանչյուր բրիգադիր լինի քաղբաժնի, յերկրային կամ կենտրոնական մամուլի գյուղթղթակից, սիստեմատիկ լուսաբանելով «250-ի» սոցմրցումը, ապահովելով նրանց փորձի ոպերատիվ փոխանակումը յերկրամասի բոլոր մրցող բրիգադների միջև։

Հյուսիսային Կովկասի ՄՏկայանների
քաղսեկտորի պետ՝ Ա. ՇՏԵՅՆՀԱՐՏ

1 Դեկտեմբերի 1933.
Ռոստով-Դոն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նամակ ընկ. Ստալինին Հյուսիսային Կովկասի 250 կոլտնտեսային լավագույն բրիգադիրներից 5
«250» բրիգադիրների ընկ. Ստալինին գրած նամակի մասին (ՀԿ(բ)Կ Հյուսիսային Կովկասի Յերկրկոմի 1933 թ. նոյեմբերի 21-ի վորոշումը) 26
Հյուսիսային Կովկասի ՄՏ կայանների քաղբաժինների բոլոր պետերին (Հյուսիսային Կովկասի ՄՏ կայանների քաղսեկտորի պետ՝ ընկ. Շտեյնհարդի 1933 թ. դեկտեմբերի 1-ի նամակը) 28

Отв. по выпуску А. Г. АВАКОВ. Тех. ред. О. ТЕР-ДАВЫДОВ

Сдано в набор 7-XII-1933 г.
Партиздат г. Ростов н-Д. Издан 544
Формат бумаги 125×176 1/32.
Уполкрайлит № В—1359

Подписано в печать 26-XII-1933 г
Об'ем 1 печ. листе.
Заказ 6146
Тираж 1500 экз.

Типография им. „Стачки 1902 года" СКПТ в г. Ростове на Дону

Цена 15 коп.
3499-
30.730
2-56112

ПИСЬМО ТОВАРИЩУ СТАЛИНУ
ОТ 250 ЛУЧШИХ КОЛХОЗНЫХ БРИГАДИРОВ СЕВЕРНОГО КАВКАЗА

На армянском языке

СКЛАД ИЗДАНИЯ
Ростов на Дону
ул. Ф. Энгельса, 92
ПАРТИЗДАТ